ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԼՈՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հասցե ՀՀ Սյունիքի մարզ գ. Լոր հեռ. 077624275 էլ. հասցե Lor041@mail.ru

Հայաստանի Հանրապետության
Սյունիքի մարզպետ
պարոն Ս. Խաչատրյանին

Հարգելի պարոն մարզպետ՝

Կից ներկայացվում է ՀՀ Սյունիքի մարզի Լոր համայնքի ավագանու 25.12.2015թ. արձանագրություն թիվ 7 N16 –Ա, N17-Ն, N18-Ա, N19-Ա և N20-Ն, որոշումները:

Առդիր՝ 11 թերթ:

Համայնքի ղեկավար Դ. Առուստամյան

19 մարտ 2016

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԼՈՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հասցե ՀՀ Սյունիքի մարզ գ. Լոր հեռ. 077624275 էլ. հասցե Lor041@mail.ru

25 դեկտեմբեր 2015թ. ՈՐՈՇՈՒՄ N 16 Ա գ. Լոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԼՈՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ «25»-Ի ԹԻՎ 7 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ և 14-րդ հոդվածների, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, որոշման նախագծի կողմ՝ 5, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 քվեարկության արդյունքներով, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Լոր գյուղական համայնքի ավագանին ***որոշում է***՝

Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Լոր գյուղական համայնքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 7 նիստի հետևյալ օրակարգը.

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Լոր գյուղական համայնքի 2016 թ-ի տեղական տուրքերի և տեղական վճարների դրույքաչափերը սահմանելու մասին:
2. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Լոր գյուղական համայնքի ղեկավարի վարձատրության չափը սահմանելու մասին:
3. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Լոր գյուղական համայնքի ղեկավարի աշխատակազմի և բյուջետային հիմնարկների աշխատակիցների թվաքանակը, հաստիկացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:
4. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Լոր գյուղական համայնքի 2016 թ-ի բյուջեն հաստատելու մասին:

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Լոր գյուղական համայնքի ավագանու անդամներ՝

Կողմ՝ _____ Լ. Գրիգորյան

Կողմ՝ _____ Ա. Մինասյան

Կողմ՝ _____ Լ. Սարգսյան

Կողմ՝ _____ Ե. Ծատրյան

Կողմ՝ _____ Ն. Հովսեփյան

Լոր համայնքի ղեկավար՝ Դ. Առուստամյան
2015 դեկտեմբեր «25». գ. Լոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԼՈՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հասցե՝ ՀՀ Սյունիքի մարզ գ. Լոր հեռ. 077624275 էլ. հասցե Lor041@mail.ru

«25» դեկտեմբեր 2015թ **ՈՐՈՇՈՒՄ N 17 Ն** գ. Լոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԼՈՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2016 Թ-Ի ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ:

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 18 կետի և "Տեղական տուրքերի և վճարների մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ և 10-րդ հոդվածների պահանջներով. հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, որոշման նախագծի կողմ՝ 5, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 քվեարկության արդյունքներով, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Լոր գյուղական համայնքի ավագանին *որոշում է՝*

1.Հաստատել Լոր համայնքի տարածքում 2016թ-ի տեղական տուրքերի և տեղական վճարների հետևյալ դրույքաչափերը՝ համաձայն հավելված 1-ի:

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Լոր գյուղական համայնքի ավագանու անդամներ՝

Կողմ՝ _____ Լ. Գրիգորյան

Կողմ՝ _____ Ա. Մինասյան

Կողմ՝ _____ Լ. Սարգսյան

Կողմ՝ _____ Ե. Ծատրյան

Կողմ՝ _____ Ն. Հովակիմյան

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Լոր գյուղական համայնքի ղեկավար Դ. Առուստամյան

«25» դեկտեմբեր 2015թ գ. Լոր

հավելված N1
ՀՀ Սյունիքի մարզի Լոր գյուղական
համայնքի ավագանու 2015թ-ի
դեկտեմբերի 25-ի N17-Նորոշման

Սահմանել Լոր համայնքի 2016 թվականի համար հետևյալ տեղական տուրքերը և վճարները.

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրք սահմանել՝

հիմնական օբյեկտների համար՝

1) մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ (կիրառվում է 0.5 գործակից) ---------- 7500 դրամ.

2) սույն կետի «1» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

ա) 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ -7500 դրամ,

բ) 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 25 000 դրամ,

գ) 1001-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 35 000 դրամ,

դ) 3001-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ - 50 000 դրամ.

ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

3) մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ ---------- 1000 դրամ,

4) 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ ---------- 1500 դրամ:

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման, աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

1) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ ----------1500 դրամ.

2) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի «1» ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն որոշման 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ սենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.

3) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն որոշման 1-ին կետով սահմանված նորմերը:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրք սահմանել ----------2500 դրամ:

ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐ

4. Համայնքի տարածքում տեղական տուրք սահմանել՝

1) ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 2000 դրամ.

2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ ----------1500 դրամ:

5. Համայնքի տարածքում՝

1) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրք սահմանել յուրաքանչյուր օրվա համար ----------350 դրամ՝1քառ.մ համար

2) հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրք ընթացիկ տարվա համար սահմանել ----------
----------150 000 դրամ.

3) խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրք ընթացիկ տարվա համար սահմանել՝----------45 000 դրամ.

ա) համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրք յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանել՝
հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում՝--3000 դրամ.
ոչ հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում՝ 500 դրամ

5[1]. Սույն օրենքի 7-րդ հոդվածի «ժ» ենթակետով նախատեսված թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր տարվա համար 50000 դրամ

6. Համայնքի տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրք ընթացիկ տարվա համար սահմանել՝
1) առևտրի օբյեկտների համար՝ ----------30 000 դրամ.
2) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ ----------75 000 դրամ.
3) բաղնիքների (սաունաների) համար՝ ----------250 000 դրամ.
4) խաղատների կազմակերպման համար՝ ----------500 000 դրամ.
5) շահումով խաղերի կազմակերպման համար՝ ----------250 000 դրամ.
6) վիճակախաղերի կազմակերպման համար՝ ----------110 000 դրամ:
7. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրք սահմանել՝
1) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ ----------1000 դրամ.
2) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ ----------2500 դրամ.
3) այլ արտաքին գովազդի համար՝ ----------500 դրամ.
4) դատարկ գովազդային վահանակների համար՝ ----------700 դրամ:
8. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել՝ ----------1 000 դրամ:
Համայնքի անվանումը ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել ----------100 000 դրամ:
9. Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել....3 000 դրամ:
9.1Համայնքի տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայություններ իրականացնելու և (կամ) մատուցելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 50 000 դրամ:

10.Սույն որոշման 1-ին, 2-րդ և 3-րդ կետերով սահմանված դրույքաչափերը կիրառված է 0.5 գործակցով:

ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐ

11. համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել՝------- 5000 դրամ

12. տեղական ինքնակառավարման մարմինների տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել՝

1) մինչև 1000 քմ ընդհանուր մակերես ունեցող հողամասերի համար՝ յուրաքանչյուր քմ. մակերեսի համար ------ ---------- 50 դրամ

13. տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար՝ մասնակիցներից վճար սահմանել՝---------- 1000 դրամ:

10. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող 10-րդ օրը:

Հայաստանի Հանրապետության
Սյունիքի մարզի Լոր գյուղական
համայնքի ղեկավար Դ. Առուստամյան

«25» դեկտեմբեր 2015թ. գ. Լոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԼՈՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հասցե ՀՀ Սյունիքի մարզ գ. Լոր հեռ. 077624275 էլ. հասցե Lor041@mail.ru

«25» դեկտեմբեր 2015թ **ՈՐՈՇՈՒՄ N18 Ա** գ. Լոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԼՈՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 8-րդ կետով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, որոշման նախագծի կողմ՝ 5, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 քվեարկության արդյունքներով, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Լոր գյուղական համայնքի ավագանին *որոշում է՝*

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Լոր գյուղական համայնքի ղեկավարի վարձատրության չափը սահմանել՝ 160 000 դրամ:

2. Թողնել անփոփոխ Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Լոր գյուղական համայնքի ավագանու 2014 թվական դեկտեմբերի «19»-ի«Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Լոր գյուղական համայնքի ղեկավարի վարձատրության չափը սահմանելու մասին» N 16 Ա որոշումը:

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Լոր գյուղական համայնքի ավագանու անդամներ՝

Կողմ՝ _____ Լ. Գրիգորյան

Կողմ՝ _____ Ա. Մինասյան

Կողմ՝ _____ Լ. Սարգսյան

Կողմ՝ _____ Ե. Ծատրյան

Կողմ՝ _____ Ն. Հովակիմյան

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Լոր գյուղական համայնքի ղեկավար Դ. Առուստամյան
«25» դեկտեմբեր 2015թ. գ. Լոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԼՈՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հասցե ՀՀ Սյունիքի մարզ գ. Լոր հեռ. 077624275 էլ. հասցե Lor041@mail.ru

«25» դեկտեմբեր 2015թ **ՈՐՈՇՈՒՄ N19 Ա** գ. Լոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԼՈՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ, ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 26-րդ կետով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի, 1-ին կետի բ) ենթակետով հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, որոշման նախագծի կողմ՝ 5, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 քվեարկության արդյունքներով, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Լոր գյուղական համայնքի ավագանին *որոշում է՝*

1. Հաստատել Լոր գյուղական համայնքի ղեկավարի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի 2-ի:
2. Հաստատել Լոր գյուղական համայնքի բյուջետային հիմնարկների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի 3-ի:
3. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Լոր գյուղական համայնքի ավագանու 2014 թվական դեկտեմբերի «19»-ի«Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Լոր գյուղական համայնքի ղեկավարի վարձատրության չափը սահմանելու մասին» N 17 Ա որոշումը:

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Լոր գյուղական համայնքի ավագանու անդամներ՝

Կողմ՝ _____ Լ. Գրիգորյան

Կողմ՝ _____ Ա. Մինասյան

Կողմ՝ _____ Լ. Սարգսյան

Կողմ՝ _____ Ե. Ծատրյան

Կողմ՝ _____ Ն. Հովհաննիսյան

Հայաստանի Հանրապետության
Սյունիքի մարզի Լոր գյուղական
համայնքի ղեկավար Դ. Առուստամյան
«25» դեկտեմբեր 2015թ

հավելված N2
ՀՀ Սյունիքի մարզի Լոր գյուղական
համայնքի ավագանու 2015թ-ի
դեկտեմբերի 25-ի N19-Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԼՈՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Աշխատակիցների թվաքանակը՝ 7:
2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը:

ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՍԻՒԱԿՈՐԸ	ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ (ՀՀ դրամ)
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ		
Համայնքի ղեկավար	1	160 000
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ		
Աշխատակազմի քարտուղար	1	101 000
Առաջատար մասնագետ-հաշվապահ	1	100 000
ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁԻՔ		
Ակումբավար	0.6	40000
Գրադարանավար	1	66138
Հավաքարար	0.6	40000
Սոց. աշխատող	0.45	30000

Լոր գյուղական համայնքի ղեկավարի
աշխատակազմի քարտուղար Ս. Ավետիսյան

Հավելված N3
ՀՀ Սյունիքի մարզի Լոր գյուղական
համայնքի ավագանու 2015 թ-ի
դեկտեմբերի 25-ի 19Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԼՈՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ,ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1 Համո Սահյանի անվան տուն - թանգարանի աշխատակիցների թվաքանակը՝ 1:

2. Համո Սահյանի անվան տուն – թանգարանի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ	ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ (ՀՀ դրամ)
Հիմնարկի ղեկավար	1	66 138

Լոր գյուղական համայնքի ղեկավարի
աշխատակազմի քարտուղար՝ Ս. Ավետիսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԼՈՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հասցե՝ ՀՀ Սյունիքի մարզ գ. Լոր հեռ. 077624275 էլ. հասցե Lor041@mail.ru

«25» դեկտեմբեր 2015թ **ՈՐՈՇՈՒՄ N20-Ն** գ. Լոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԼՈՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, որոշման նախագծի կողմ՝ 5, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 քվեարկության արդյունքներով, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Լոր գյուղական համայնքի ավագանին *որոշում է՝*

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Լոր գյուղական համայնքի 2016 թվականի բյուջեն՝ համաձայն հավելված N 4-ի:

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Լոր գյուղական համայնքի ավագանու անդամներ՝

Կողմ՝ _____ Լ. Գրիգորյան

Կողմ՝ _____ Ա. Մինասյան

Կողմ՝ _____ Լ. Սարգսյան

Կողմ՝ _____ Ե. Ծատրյան

Կողմ՝ _____ Ն. Հովակիմյան

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Լոր գյուղական համայնքի ղեկավար Դ. Առուստամյան

«25» դեկտեմբեր 2015թ

ԼՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2016Թ. ԲՅՈՒՋԵ

հավելված N4
ՀՀ Սյունիքի մարզի Լոր գյուղական
համայնքի ավագանու 2015թ-ի
դեկտեմբերի 25-ի N20-Ն որոշման

ՄՈՒՏՔԵՐ - ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

հազ. դրամ

		Վարչական բյուջե	Ֆոնդային բյուջե
Տարեսկզբի ազատ մնացորդ	X	295.0	125.4
Հողի հարկ	X	487.2	X
Հողի հարկի ապառք	X	12.8	X
Գույքահարկ	X	253.0	X
Գույքահարկի ապառք	X	7.0	X
Հողի վարձակալության վճար	X	600.0	X
Հողի վարձավճարի ապառք	X	45.0	X
Եկամտահարկ	X	----	X
Տեղական տուրքեր	X	28.0	X
Այլ ոչ հարկային եկամուտներ	X	----	X
Այլ մուտքեր	X	-----	X
Ընդամենը սեփական եկամուտներ	X	1433.0	X
Պատվիրակված լիազորություն	X		X
Վարձատրվող հասարակական աշխատանք.	X		X
Գույքի օտարումից մուտքեր	X		
Այլ կապիտալ տրանսֆերտներ	X		
Դոտացիա	X	7764.5	
Ընդամենը մուտքեր	X	*9197.5*	

Ծախսեր

հազ. դրամ

Հ/Հ	Ծախսային հոդվածների անվանումը	Կառավար ապարատ 01.1.1	Փողոցային Լուսավորու 06.4.1	Այլ մշակույթ 08.2.4	Ջրամա-տակար. 06.3.1	Ընդամենը վարչական բյուջե	Ընդամենը ֆոնդային բյուջե
4111	Աշխատողների աշխատավարձ և հավելավճարներ	6996.2				6996.2	X
4232	Համակարգչային ծառայություններ	35.0				35.0	X
4211	Գործառնական և բանկային ծառայությութ. ծախսեր	-----					X
4212	Էներգետիկ ծառայություններ	200.0	90.0			290.0	X
4212	Ջեռուցման ծախսեր	----					X
4214	Կապի ծառայություններ	250.0				250.0	X
4221	Ներքին գործուղումներ	180.0				180.0	X
4251	Շենք. շին. Ընթացիկ նորոգում	50.0				50.0	X
4234	Տեղեկատվական ծառայություններ	41.5				41.5	X
4269	Հատուկ նպատակային այլ նյութեր	----		200.0		200.0	X
4261	Գրասենյակային նյութ. և հագուստ	50.0				50.0	X
4264	Տրանսպորտային նյութեր	255.0			50.0	305.0	X
4267	Կենցաղային, հանրային սննդի նյութեր	50.0	50.0		50.0	150.0	X
4819	Նվիրատվություն	70.0				70.0	X
4239	Ընդհանուր բնույթի այլ ծառայություն	120.0				120.0	
4891	Պահուստային միջոցներ					459.8	
4772	Այդ թվում համայնքի բյուջեի վարչակա մասի պահուստային ֆոնդից ֆոնդային մաս կատարվող հատկացումներ						
5113	Շենների և շինությունների կապիտալ վերանորոգում						270.4
5122	Վարչական սարքավորումներ						150.0
5123	Այլ մեքենաներ և սարքավորումներ						
6110	Անշարժ գույքի իրացումից մուտքեր						
6410	ՀՈՂԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ						
	Ընդամենը ծախսեր	8297.7	140.0	200.0	100.0	9197.5	420.4
	Տարեվերջի մնացորդ						

Լոր համայնքի ղեկավար Դ. Առուստամյան